ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
# ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱԺԽՈ-018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1. «ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեում, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովում (ԵԱՀԿ ԽՎ), Միջխորհրդարանական միությունում, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում և Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակությունների կազմերը հաստատելու մասին» Ազգային ժողովի խորհրդի ԱԺԽՈ-018-Ա որոշման.

1) 1-ին հավելվածում՝ ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեի Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Թադևոս Ավետիսյան «Հայաստան» խմբակցություն» բառերը փոխարինել «Լևոն Քոչարյան «Հայաստան» խմբակցություն» բառերով.

2) 3-րդ հավելվածում՝ Միջխորհրդարանական միությունում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Էլինար Վարդանյան «Հայաստան» խմբակցություն» բառերը փոխարինել «Լևոն Քոչարյան «Հայաստան» խմբակցություն» բառերով:

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝** **Հ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**2024 թվական, հունվարի 12**
**Երևան**
**ԱԺԽՈ-006-Ա**